

Լ . Կ Ա Ս Ս Ի Լ  
ԲՈՒՂՅՈՆՆԻԿՆԵՐ



ՊԵՏՅՐԱՏ \* ՅԵՐԵՎԱՆ


1 9 3 5

891.710  
4-26

36-M 891-716  
ՍՁ304 4-26

# ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ռուս. Քարզմ. Ա. Հայրան  
Խմբագիր՝ Ա. Առստայան  
Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանյան  
Մեքագրիչ՝ Հ. Մանուկյան



## Ո Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Կ Ն Ե Ր Ը

Նրանք չորսով մտերմացան—Մարտան, Ավգուստը, Մայան և Յուլիկը: Մանկապարտեզում նրանց անվանում էին որացուցիկներ, վորովհետև կա մաքրոս ամիս, ա վգուստ (ոգոստոս) ամիս ել կա: Մայիսն ել ե ամիս: Յուլիկն ել նման ե հուլիս ամսին: Դրա համար ել նրանց որացուցիկներ անվանեցին:

Մարտան և Ավգուստ Բերզը նոր էին յեկել Գերմանիայից: Նրանց հայրը գերմանական ինժեներ եր: Նա յեկել եր մեզ մոտ նոր մեքենաներ կարգի գցելու Իսկ Մայա և Յուլիկ Բուզրովների հայրը բանվոր մեքենավար եր: Նա աշխատում եր նոր մեքենայի վրա: Գործարանում նա լավագույն հարվածային եր: Դրա համար ել մայիսի մեկին նրան, Կարմիր հրապարակը գնալու համար, մուտքի տոմս էին նրվիրեր: Ընկեր Բուզրովը խոստացել եր Յուլիկին ել տանել: Որացուցիկներն այս պատճառով քիչ եր մնում կովեցին:

—Դու պետք ե Կարմիր հրապարակում գրոսնես,—հարցրեց Մարտան Յուլիկին: Նա ուսերեն դեռ վատ եր խոսում:

—Այո,—պատասխանեց Յուլիկը,—յես իմ հայրիկի հետ կգնամ Կարմիր հրապարակը:

—Օյնտեղ շքերթ կլինի,—հարցրեց Ավգուստը, վորը ուսերեն նույնպես վատ եր խոսում:

—Այո, Կարմիր հրապարակում կարմիր բանակայինների շքերթ կլինի: Յեվ Վորոշիլովը կլինի, և Բուդյոնին կլինի, բոլորը կլինեն: Յես ել կլինեմ:

—Յես ել կլինեմ, յես ել եմ ուզում—գոռաց Մայան:


—Աղջիկներին շքերթին ամենեվին չեն ել թողնի,—կոպիտ ձայնով ասաց Յուլիկը:

—Վոչ, կթողնեն,—ճչաց Մայան:



МЭС ИЛЛ. 9444900  
Гос. Библиотека  
ЗУИП-Арм.ССР  
Им. А. Машаляна  
Д. 48/140/11 10-11/11

60294-67



—Վոչ, չեն թողնի:  
 —Վոչ, կթողնեն, կթողնեն, կթողնեն:  
 Որացուցիկներն այնպիսի աղմուկ բարձրացրին, վոր նրանց ղեկավարը՝ մորաքույր Սիման մոտ վազեց:  
 —Ի՞նչ ե պատահել, — հարցրեց մորաքույր Սիման:  
 —Ինչո՞ւ յե Յուզկան ասում, վոր ինձ շքերթին չեն թողնի:  
 —Այդ ի՞նչ շքերթի մասին եք խոսում, — զարմացավ մորաքույր Սիման:  
 Որացուցիկները պատմեցին, թե բանն ինչու՞ն է: Մորաքույրը ծիծաղեց:  
 —Վոչինչ, — ասաց նա, — թող ասի: Իսկ մենք մանկապարտեզում ինքներս շքերթ կկազմակերպենք, ճիշտ այնպես, ինչպես կարմիր հրապարակում: Յե՛վ հեծելազոր կլինի և հետևակ կլինի և Բուդոյոններն կլինի: Ամեն ինչ կլինի, ամեն ինչ, Բոլոր որացուցիկները կլինեն:  
 — Ձինվորներ ել կլինեն, — հարցրին Բերդ որացուցիկները:  
 — Մեզ մոտ զինվոր չկա, մեզ մոտ կարմիր բանակայիններ կան, — գոռացին որացուցիկ Բուդոյոնները:  
 Իսկ ո՞վ ե ավելի մեծ՝ կարմիր բանակայինը, թե՞ միլիցիոնները, — հարցրեց Ավգուստը:  
 — Նավաստին ամենից մեծ ե, — ասաց Մայան:  
 — Ամենից գլխավորն ողաշուն ե, — առարկեց Յուլիկը:  
 — Որացուցիկներ, մի վիճեք, — հանգստացրեց մորաքույր Սիման: Մեզ մոտ և կարմիր բանակայինները, և նավաստիները, և ողաշունները կարևոր են:

**Ո Ր Ա Յ Ո Ւ Ց Ի Կ Ը Բ Ո Ւ Դ Յ Ո Ն Ն Ո Ւ Մ Ո Տ**

Շքերթ եր: Կարմիր հրապարակում կանգնել եր կարմիր բանակը: Մայիսի մեկն եր: Քարե աստիճանները վրա կանգնել եյին լավագույն հարվածայինները: Նրանք կանգնել եյին Կրեմլի պատերի յերկարությամբ: Իսկ նրանց հետ կանգնել եր ընկեր Բուդոյոնը: Ընկեր Բուդոյոնի ուսերին նստել եր Յուլիկը: Նա ուզում եր տեսնել Բուդոյոննուն: Նա վեր եր ցատկում և նայում իր շուրջը: Իսկ նրա շուրջը բանակն եր կանգնած: Յուլիկին սկզբում թվաց, թե ձգված ե մեծ կանաչ մարզագետին: Բայց դրանք սահմանապահներն եյին կանգնած կանաչ գլխարկներով: Կողքին ծաղկել եր ծաղիկների հսկայական կարմիր դաշտ: Բայց դա հատուկ բանակն եր կանգնել կարմիր գլխարկներով: Նրանց մոտ ասես ձյուն եր թափվել: այդ ել նավաստիներն եյին կանգնել սպիտակ գլխարկներով:  
 Իսկ ավելի հեռվում փայլվում, փայլատակում և շողշողում եյին պուլետարական դիվիզիայի պողպատյա սաղավարտները:  
 Հանկարծ ամբողջ բանակը միանգամից «ուռա» գոչեց: Կրեմլի դարպասից ձին նստած դուրս յեկավ ընկեր Վորոշիլովը: Նա վողջուռնեց կարմիր բանակին: «Բարև ձեզ», միաձայն պատասխանեց բանակը:  
 — Բարև՝ ձեզ, բարև, — գոչեց Յուլիկն ել: Բայց նրան վո՞չ վոր չլսեց: Յե՛վ հանկարծ Յուլիկը վախեցավ: Քիչ եր մնում հոր ուսերից ընկներ: Յուլիկին թվաց, թե յերկինքն ու յերկիրը իրար զարկվեցին, ինչպես ձեռքի ավերը: Իսկ Կրեմլի թնդանոթը հարվածեց: Հարյուր մեկ անգամ թնդանոթները վորոտացին: Հարյուր մեկ անգամ յերկինքը խփվեց գետնին: Հետո հրապարակի մեջտեղը դուրս յեկան հարյուր զիբիժյոր, հազար թմբկահար և յերկու հազար փողհար: Գլխավոր զիբիժյորը — կա-



պելմեյստերը — բարձրացավ պատվանդանի վրա: Շքերթի գլխավոր հրամանատարը բարձրացրեց թուրը: Իսկ գլխավոր կապելմեյստերը բարձրացրեց իր չափ տալու փայտը: Յե՛վ հարյուր զիբիժյորներ բարձրացրին իրենց փայտիկները:

— Հաղթական մարշ, — գոչեց գլխավոր հրամանատարը:  
 — Հաղթական մարշ, — կրկնեցին հրապարակում գտնվող բոլոր հրամանատարները:  
 — Քայլով առաջ, — հրամայեց գլխավոր հրամանատարը և թուրը թափահարեց: Յե՛վ բոլոր հրամանատարները կրկնեցին հրամանը: Իսկ գլխավոր հրամանատարը թափահարեց փայտիկը և հարյուր զիբիժյորները կրկնեցին:


Յե՛վ ուռցնելով շրթունքները, նվազախումբը փչեց փողերը: Մարշ, մարշ... Անցավ հետևակը, թրխթրխկացրին մոտոցիկետը, Լողացին զիբիժարները, Հեռվում փայլեցին թրերը, Մլացավ հեծելազորը, Յե՛վ ապա թնդանոթները, Թոչկոտացին սայլակները, Հրապարակ սողացին տանկերը, Սայլակներում գնդացիները, Յերկինքում ինքնաթիռներ, Փայլում են թևերն արևի տակ, Մլանում ե եսկադրիլիան: Դղրդացին ձպուռները, —

Հսկա ուժատարները, Թոչում, սողում են հսկաները Այստեղ, ուր Վորոշիլովն ե, Վորաեղ Բլյուսերն ու Բուդոյոննին յոննին Հանդիպում են գումարտակներին: Յե՛վ բանակը շքերթով Անցնում ե շարքով, կարգով, Հեծելազոր թե հետևակ, Շարժվում, անցնում են շարունակ: Բոլորը գոչել են ուզում. «Հեյ, թշնամի, տեսնում ես: Այ, այդպես»:

Այն ժամանակ Յուլիկը նկատեց, վոր Լենինի դամբարանի մոտ կանգնած են ինչ վոր պարոններ և սպաներ: Պարոնները գլխներին ցիլինդր եյին դրել: Սպաները համազգեստով և ուսաղիթներով:

Այսպիսի սպաներ ու պարոններ Յուլիկը միայն նկարներում եր տեսել:

— Հայրիկ, — կամաց հարցրեց Յուլիկը, — հայրիկ, իսկ ինչո՞ւ նրանց չես տանում:  
 — Ո՛ւր, զարմացավ հայրը:  
 — Թեկուզ միլիցիայի բաժանմունք, — ասաց Յուլիկը:  
 — Ո՛ւ՛մ, — հարցրեց հայրը — ո՞ւմ տանեն միլիցիայի բաժանմունքը:  
 — Այ, այն գեներալներին և կապիտալիստներին:  
 — Հի՛մար, դրանք հյուրեր են, արտասահմանի գեսպաններ: Թող նրանք նայեն և պատմեն բոլոր յերկրներին, թե մեք կարմիր բանակն, ինչպես հզորացել ե, Հասկացա՞ր:



ԲՈՒԴՅՈՆՆԻՆ ՈՐԱՑՈՒՑԻԿՆԵՐԻ ՄՈՏ



Մյուս որն ընկեր Բուդյոննին յեկավ այն գործարանը, վորտեղ աշխատում էին որացուցիկների հայրերը: Գործարանը շատ լավ եր աշխատել, և Սիմյոն Միխայիլովիչ Բուդյոննին յեկել եր հարվածայիններին շնորհավորելու: Նա ավտոյից դուրս յեկավ: Հարվածայինները հավաքվեցին ահումբ: Բուդյոննին ճառ ասեց:

— Հանկարծ դեմ դուրս յեկան որացուցիկները— Մարտան և Մայան: Նրանք մի քիչ վախենում էին: Շատ ժողովուրդ կար:

— Ընկեր Բուդյոնի, — ասաց Մայան և լռեց:

— Յես եմ Բուդյոննին, — ասաց Սիմյոն Միխայիլովիչը:

— Քեռի Բուդյոննի, մորաքույր Սիման... — սկսեց Մարտան, բայց Մայան նրան ընդհատեց.

— Մենք, բոլոր յերեխաներս խնդրում ենք ձեզ գալ մեզ մոտ հյուր՝ մանկապարտեզ: Մեզ մոտ այնտեղ շքերթ կլինի:

— Մեզ մոտ աղջիկներին ել թույլ կտան, վոր շքերթի մասնակցեն, — ավելացրեց Մայան:

Մենք ել ենք ուզում, վոր Բուդյոննին իսկական լինի, — ավելացրեց Մայան:

— Իե, ընկերներ, — ասաց Բուդյոննին հարվածայիններին, — քանի վոր յերեխաները կանչում են, չեմ կարող հակառակվել: Յենթարկվում եմ: Գալիս եմ: Կաննք: Տարեք:

Բուդյոննին բռնեց որացուցիկների ձեռքից: Նրանք ահումբից փողոց դուրս յեկան: Բուդյոննուն տեսնելով՝ փողոցում յեղողները վազեցին: Վողջ փողոցը գոչեց. «Բուդյոննին, Բուդյոննին ե գալիս»:

Իսկ որացուցիկները Սիմյոն Միխայիլովիչի ձեռքից բռնած ուռած, փքված գնում էին: Իսկ նրանց յետևից դանդաղ հազալով շարժվում եր Բուդյոննուն ավտոն:

Այսպես նրանք յեկան մանկապարտեզ: Ներս մտան գլխավոր մուտքից: Մորաքույր Սիման ղիմավորեց ընկեր Բուդյոննուն: Յերեխաները նրան շրջապատեցին:

— Քեռի, դուք իսկապես Բուդյոննին եք, — հարցրին յերեխաները:

— Ազնիվ խոսք, — ասաց Բուդյոննին:

— Իսկ ինչո՞ւ ձիու վրա չեք:

— Այտեղ ձի չի մտնի, — պատասխանեց Սիման յերեխաներին:

— Իսկ ինչո՞ւ թուր չունեք:

— Ժողով գնալիս թուր չեն կապում, — ասաց Բուդյոննին, — յես հարվածայինների հետ մտերմանում եմ և վոչ թե կովում: Ճիշտ ե, չե՞:

— Ինչքան ումբիկներ ունես ոձիքիդ, — ասացին յերեխաներից մի քանիսը և ամեն կողմի վրա հաշվեցին չորս ումբիկ:

— Իսկ քանի՞ շքանշան, — գոչեցին մյուսները և համբեցին կարմիր դրոշի չորս շքանշան:

— Համենայն դեպս դուք իսկականը չեք, — ասավ համառ Ավգուստը:





Իսկական Բուդյոննին փառավոր գեներալ է: Իսկ իսկական գեներալը մի՞թե մանկապարտեզ կգա:

— Մեզ մոտ գեներալներ չկան, — աղմկեցին յերեխաներն իրար ընդհատելով: Բուդյոննին ամենևին գեներալ չէ, նա Կարմիր հեծելազորի ամենագլխավորն է:

— Ճիշտ է, — ասաց Բուդյոննին: Կեցցեք, յերեխաներ: Իսկ յեթե չեք հավատում, վոր յես իսկական Բուդյոննին եմ, կարող եք թեկուզ բեխերս շոշափել:

Յեվ բոլոր յերեխաները հերթով շոշափեցին ընկեր Բուդյոննու բեխերը:

— Այնուամենայնիվ դուք նման եք, — ասաց Յուլիկը:

— Ու՞մ նման եմ:

— Նկարներում յեղած Բուդյոննուն: Մենք ձեզ ել ենք նկարել, և Մայան, և Ավգուստը, բոլորը

Որացուցիկները ցույց տվին իրենց նկարածները:

Ընկեր Բուդյոննու նկարը ձիու վրա նստած, շատ ել յավ չեր դուրս յեկել: Բուդյոննու բեխերն աճել էյին աչքերից, իսկ ձեռներն ասես թելեր լինեյին: Ավելի շուտ ձին նման եր ճպուռի: Միայն սոմբիկներն ուղիղ էյին:

Բայց նկարներն ընկեր Բուդյոննուն դուր յեկան: Նա ծիծաղեց և ասաց

— Լավ է: Վոչինչ, վոր շատ ել նման չէ: Սովորեցեք: Այ, ուսմբիկները ճիշտ են:

Յերեխաները շուտով Բուդյոննու հետ բոլորովին մտերմացան: Նրանք ցույց տվին իրենց բոլոր խաղալիքները, մանկապարտեզի բոլոր սենյակները. — և ննջարանները, և աշխատանքի սենյակը, և ընթերցարանը, և լվացվելու սենյակը: Մինչև անգամ որացուցիկները վիճեցին Բուդյոննու հետ այն մասին, թե ով է գլխավոր: Կարմիր բանակայինը, միլիցիոնները, ողաշուն, թե՞ նավաստին: Ընկեր Բուդյոննին պատասխանեց ճիշտ այնպես, ինչպես մորաքույր Սիման. «Բոլորը հարկավոր են: Վոչ վոր գլխավոր չի»:

Հետո սկսվեց ջերթը: Մա մի նշանավոր ջերթ եր: Մասնակցում էյին բոլոր յերեխաները և որացուցիկները: Շքերթի հրամանատարն ել ինքը՝ ընկեր Բուդյոննին էր:

Ամեն ինչ այնպես եր, ինչպես Կարմիր հրապարակում: «Յերաժշտություն», — ասաց Սիմյոն Միխայիլովիչը: Մորաքույր Սիման նստեց դաշնամուրի մոտ: «Հյուրերն ատենարեմ բարձրացան» ծիծաղելով ասաց մորաքույր Սիման: Յեվ հյուր յեկած ծնողները տեղավորվեցին պատերի մոտ գտնվող նստարանների վրա: Նրանց մեջ եր ընկեր Բուգրովը:

— Այ, արտասահմանի դեսպան ել կլինի, — գոչեց Յուլիկը, ցույց տալով գերմանական ինժեներ Բերգին: Ինժեներ Բերգը համաձայնեց դեսպան լինել:

Բոլոր յերեխաները ծածկեցին Բուդյոննովյան սաղավարտներ, կարմիր աստղերով: Նրանք վերցրին խաղալիք հրացանները և գրոշակները:

— Մենք բուզյոնովցիներ ենք,— գոչեցին յերեսաները:  
 — Սպասեցեք,— ծիծաղեցին ծնողները:— Բուզյոնովցիներ կլինեք, իսկ առայժմ բուզյոնիկներ եք:

Որացուցիկները նստեցին աթոռների վրա, վորպես ճիւղեր, թիկունքը դեպի առաջ— սա կարմիր հեծելազորն էր: Ուզում էին Բուզյոննու համար ել այդպիսի ճի ճարեն: Բայց բոլոր ճիւղերը նրա համար փոքր էին: Յերեսաների մի մասը հագավ խաղալիք-հակագողացի դիմակները: Սա քիմիական գունդն էր: Մյուսները յերեք-յերեք նստել էին նստարանների վրա-դրանք տանկեր էին: Վոմանք էլ կարմիր խաչեր կապեցին— դրանք սանիտարներ էին: Առաստաղից կախեցին դիրիժաբլներ և ինքնաթիռների մոդելներ:

— Շքերթ, զգաստ,— հրաման տվավ Բուզյոնին և բոլորը լռեցին:

— Ա՛յ դարձ, գոչեց Բուզյոնին: Յե՛վ բոլորը դեպի աջ դարձան: Միայն Ավգուստը չհասկացավ և դեպի ձախ դարձավ: Շփոթվելուց նրա աջ ախանջը կարմրել էր:

— Այ ախանջդ վոր կողմն է քոր գալիս,— հարցրեց Բուզյոնին:

— Այս կողմը,— ասաց Ավգուստը և դարձավ այն կողմը, վոր աջ ախանջը քոր էր գալիս:

— Հանդիսավոր մարշ, — հրաման տվավ Բուզյոնին և ձեռքը դրեց գլխարկին:

— Ինչպի աջ, յերեք աթոռի տարածությամբ, ուղղությունը դեպի դաշնամուրը, բայց լն-ն-ով մարշ:

Մորաբույր Սիման նվագեց Բուզյոննու մարշը. «Մեր յեղբայր Բուզյոնին, վողջ ժողովուրդը մեզ հետ է», — յերգեցին յերեսաները: Յե՛վ շքերթն սկսվեց:



Մարշ, մարշ: Անցավ հետևակը  
 Յե՛վ աղմկեց ինչ վոր բան,  
 Ասես թե հեծելազոր,  
 Ասես թե հրետանի,  
 Յե՛վ բանակը շքերթով  
 Անցնում է շարան-շարան:



— Մեկ, յերկու, ձախ... Մեկ, յերկու, ձախ...

— Լավ եք բայում, յերեսաներ,— գոչեց ընկեր Բուզյոնին:

— Ծառայում ենք աշխատավոր ժողովրդին,— պատասխանեցին յերեսաները:

Յուրիկի համար այստեղ ավելի հետաքրքրական էր, քան թե կարմիր Հրապարակում: Սլանում էր աթոռների վրա որացուցիկների հեծելազորը: Առաջ էին շարժվում տանկ-նստարանները: Վորոտում էր մարշը: Քայլում էին քիմիկոսները և սանիտարները: Ծածանվում էին դրոշակները: Որորվում էր դիրիժաբլը: Ծնողները տեղերից վեր էին թռչում: Նրանք էլ էին «ուռա» գոչում և ծափահարում:

Ընկեր Բուզյոնին էլ «ուռա» գոչեց և պատվի առավ:

— Չարմանալի յե,— ասաց ինժեներ Բերգը, վորը դեսպանի տեղ էր: — Չարմանալի յե: Մե՛ծ, նշանավոր գեներալը բանվորների յերեսաների համար իրեն խաղալիք է դարձնում: Չափազանց Չարմանալի յե:



— Չարմանալու բան չկա, պատասխանեց ընկեր Բուզբուլը: Յե՛վ բանակն ե մեզ հարազատ, և մեր յերեխաները նրանն են:

— Այս զարմանալի պատմութիւնը հենց նրանով ե զարմանալի, վոր դրա մեջ ձեզ համար զարմանալի վոչինչ չկա, — սասց ինժեները: Նա ել եր ուսերեն վատ խոսում:

Բուզբուլինները շքերթը վերջացրին....



3607

Ua30

188

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

1

2

ԳՄ



Լ. ԿԱՍՍԻԼ  
ԲՈՒԴԵՆՅԻՇԻ

ԳԻՅ ՍՏՐԱ Երևան.